

Հավելված  
Հայաստանի Հանրապետության  
կառավարությանն առընթեր  
քաղաքացիական ավիացիայի  
գլխավոր վարչության պետի  
2016 թվականի ապրիլի 26-ի  
Թիվ 71-Ա հրամանի

## ԱԵՐՈՂՐՈՄԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Աերոդորմի տեխնիկական սպասարկման ուղեցույցը (այսուհետ՝ Ուղեցույց) մշակված է Չիկագոյին Կոնվենցիայի N14 Հավելվածի (այսուհետ՝ Հավելված) գլուխ 10-ի, ԻԿԱՕ-ի N9137 ձեռնարկի (Doc.9137) Մաս 9-ի, ԻԿԱՕ-ի N9476 ձեռնարկի (Doc.9476) և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության (այսուհետ՝ Գլխավոր վարչություն) պետի 2007 թվականի ապրիլի 23-ի N64-Ն հրամանով հաստատված <<ՀՀ սերտիֆիկացված աերոդրոմների շահագործման պայմաններով>> (այսուհետ՝ Շահագործման պայմաններ) սահմանված պահանջների համաձայն և սահմանում է աերոդրոմ շահագործողի կողմից աերոդրոմի տեխնիկական սպասարկման գործընթացը:

2. Սույն ուղեցույցի իմաստով՝

1) Աերոդրոմ շահագործող է համարվում օդանավակայանի սեփականատերը կամ այն իրավաբանական անձը, որն իրականացնում է օդանավակայանի շահագործումը կամ կոնցեսիոն կառավարումը:

2) Աերոդրոմի տեխնիկական սպասարկում է համարվում աերոդրոմի տարրերի, տեսողական միջոցների, էներգամատակարարման համակարգերի, տեխնիկական միջոցների և սարքավորումների պիտանիության և շահագործողական վիճակի պահպանմանն ուղղված միջոցառումները:

3) Աերոդրոմի տարրեր են համարվում օդանավերի թռիչք-վայրէջքի, գետնավարման, կայանման համար նախատեսված արհեստական ծածկույթով կառույցները (վազբուրի, դեկուրի, կառամատույց, կայանատեղ), թռիչքային գոտին, ինչպես նաև թռիչքների անվտանգության ապահովման համար նախատեսված սույն ենթակետում նշված կառույցների անվտանգության գոտիները (արգելական և անվտանգության վերջնագոտիներ, անվտանգության եզրագոտիներ):

4) Տեսողական միջոցներ են համարվում աերոդրոմային միջոցներ (մականշաններ, աերոնավիզացիոն լույսեր, տեղեկատվական նշաններ), որոնք ցուցանում են օդանավերի թռիչք-վայրէջքի, գետնավարման և կայանման, ինչպես նաև աերոդրոմի տարածքում շահագործվող տրանսպորտային միջոցների երթևեկման ուղղությունները:

5) Հատուկ տրանսպորտային միջոցներ են համարվում սույն կետի 3-րդ ենթակետում նշված աերոդրոմի տարրերի շահագործողական վիճակի պահպանման նպատակով օգտագործվող տրանսպորտային միջոցները:

3. Տեխնիկական սպասարկումն իրականացվում է հետևյալ հիմնական փուլերով՝

1) Ուսումնասիրություններ, գնում:

2) Թերությունների կամ անսարքությունների արձանագրում:

ա. Թոփքների անվտանգությանը սպառնացող թերությունների առկայության դեպքում ձեռնարկվում են անհապաղ միջոցներ՝ ուղղված դրանց վերացմանը:

բ. Թոփքների անվտանգությանը սպառնացող թերությունների արձանագրման դեպքում այդ մասին անմիջապես տեղեկացվում է օդային երթևեկության սպասարկման (այսուհետ՝ ՕԵՍ) մարմինը և օդանավակայանի Շահագործման կամ Թոփքային անվտանգության ծառայությանը:

3) Վերականգնման կամ վերանորոգման միջոցառումների ծրագրի մշակում:

4) Վերականգնման կամ վերանորոգման աշխատանքների իրականացում:

#### ԱԵՐՈՂՐՈՄԻ ՏԱՐՐԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄՊԱՍԱՐԿՈՒՄԸ

4. Աերողրոմի տարրերի տեխնիկական սպասարկումը նախատեսում է արհեստական ծածկույթով տարրերի և անվտանգության գոտիների գրունտային հատվածների շահագործողական վիճակի ուսումնասիրություններ և դրանց արդյունքում արձանագրված թերությունների վերացում, ինչպես նաև ընթացիկ սպասարկումը:

1) Աերողրոմի տարրերի տեխնիկական սպասարկման գործընթացն ապահովելու նպատակով Աերողրոմ շահագործողի կողմից պետք նշանակվի է համապատասխան ծառայություն(ներ) (այսուհետ՝ Ծառայություն):

2) Աերողրոմի տարրերի տեխնիկական սպասարկման գործընթացն իրականացվում է հետևյալ ժամանակացույցի համաձայն ամենօրյա, տարեկան և սեզոնային: Ելնելով առաջացած պայմաններից կարող է իրականացվել նաև օպերատիվ տեխնիկական սպասարկում:

3) Ուղեցույցի իմաստով աերողրոմի տարրերի սեզոնային տեխնիկական սպասարկում է համարվում ձմեռային ժամանակաշրջանին աերողրոմի տարրերի նախապատրաստման և ձմեռային ժամանակաշրջանում դրանց շահագործողական վիճակի պահպանմանն ուղղված գործընթացը:

5. Աերողրոմի տարրերի ամենօրյա տեխնիկական սպասարկման գործընթացի շրջանակներում իրականացվում է զննում օրն առնվազն չորս անգամ. լուսաբացին, առավոտյան, ցերեկը, երեկոյան և ընթացիք աշխատանքներ:

1) Ամենօրյա զննման շրջանակներում վերահսկվում են՝

ա. Արհեստական ծածկույթի և անվտանգության գոտիների գրունտային հատվածների մաքրությունը (կողմնակի առարկաների առկայությունը) և դրանց վրա ջրակուտակումների առկայությունը:

բ. Արհեստական ծածկույթի վնասվածքների առկայությունը:

գ. Արհեստական ծածկույթով տարրերի մականշումները:

դ. Գրունտային հատվածների բուսական շերտի բարձրությունը:

ե. Պարագծային ցանկապատի ամբողջականությունը:

2) Տեղումների դեպքում կատարվում է վազբուղու լրացուցիչ ուսումնասիրություններ և կցորդման գործակցի չափումներ:

ա. Վազբուղու ծածկույթի վիճակի (ջրի, ձյան, սառույցի և այլն) և կցորդման գործակցի մեծության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ՕԵՍ մարմնին և օդանավակայանի Շահագործման կամ Թոփքային անվտանգության ծառայությանը:

բ. Վազքուղու ծածկույթի վիճակի և կցորդման գործակցի մեծության վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևաչափը սահմանված է Շահագործման պայմանների 4-րդ գլխով:

գ. Չափումների հաճախականությունը պայմանավորվում է տեղումների քանակով և թռիչքների ղեկավարի ցուցումով:

3) Ուժեղ քամիների պայմաններում անցկացվում են անբարձրագույն տարրերի լրացուցիչ զննումներ և դրանց մաքրության ապահովմանն ուղղված աշխատանքներ:

4) Առավտոյան կատարված զննման հիման վրա Ծառայությունը՝

ա. բնութագրում և ՕԵՍ մարմնին ու օդանավակայանի Շահագործման ծառայությանն է ներկայացնում տեղեկատվություն անբարձրագույն տարրերի վիճակի վերաբերյալ:

բ. Կազմում է անբարձրագույն տարրերի տեխնիկական սպասարկման օրվա ընթացիք աշխատանքների ծրագիրը, որը ներկայացնում է ՕԵՍ մարմնին ու օդանավակայանի Շահագործման ծառայությանը:

գ. Իրականացնում է օրվա ընթացիք աշխատանքների ծրագրի կատարումը:

6. Տարեկան տեխնիկական սպասարկումը կարող է իրականացվել տարվա ընթացքում:

7. Տարեկան տեխնիկական սպասարկման շրջանակներում յուրաքանչյուր գարնանն իրականացվում են ուսումնասիրություններ, որոնց ընթացքում՝

1) Անցկացվում է անբարձրագույն տարրերի ծածկույթի ուսումնասիրություն և կազմվում է թերությունների ակտ կամ սխեմա, որի վրա նշվում են՝

ա. Արհեստական ծածկույթի կառուցվածքի վնասվածքները՝ ճեղքվածքները, փոսերը, կարանները, ամրաձողերի և շերտահանվածքների առկայությունը: Բետոնյա ծածկույթի կառուցվածքային կարանների լցավորվածությունը:

բ. Արհեստական ծածկույթի անհարթությունները՝ նստվածքները, հորդուբորդերը:

գ. Արհեստական ծածկույթի վրա նավթամթերքների հետքերի և ռետինե նստվածքների կուտակումների առկայությունը:

դ. Գրունտային ծածկույթով անբարձրագույն տարրերի հարթությունը, համակցումը արհեստական ծածկույթով տարրերի հետ և կողմնակի (ոչ անբարձրագույն) առարկաների առկայությունը:

ե. Թվարկած թերությունների վայրը, երկրաչափական չափերը և ծավալները:

2) Ուսումնասիրվում է ջրահեռացման և մաքրման համակարգերի շահագործողական վիճակը:

3) Ուսումնասիրվում են անբարձրագույն տարածքում առկա խոչընդոտների ցերեկային մականշումները:

4) Ուսումնասիրվում է պարագծային ճանապարհի վիճակը:

8. Անբարձրագույն տարրերի արհեստական և գրունտային ծածկույթներին, մականշումներին ներկայացվող պահանջները սահմանված են Հավելվածով, ԻԿԱՕ-ի N9137 ձեռնարկի (Doc.9137) Մաս 9-ով, Շահագործման պայմաններով և Գլխավոր վարչության պետի 2007 թվականի ապրիլի 27-ի N68-Ն հրամանով հաստատված <<ՀՀ միջազգային և ներքին օդանավակայանների անբարձրագույն տարրերի սերտիֆիկացման կարգով>> (այսուհետ՝ Կարգ):

9. Ամենօրյա զննման արդյունքների, բացառությամբ 3-րդ կետի 2-րդ ենթակետի <<բ>> պարբերությունով և 5-րդ կետի 4-րդ ենթակետերի <<բ>> պարբերությունով սահմանված դեպքերի և Ուղեցույցի 7-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն կազմված թերությունների ակտի կամ սխեմայի հիման վրա մշակվում է թերությունների

վերացման և անբողոքումի տարրերի տեխնիկական սպասարկման միջոցառումների ծրագիր, որում նշվում են՝ միջոցառումները, դրանց վերացման ժամկետները, կատարող և պատասխանատու կազմակերպությունները կամ ծառայությունները:

- 1) Միջոցառումների ծրագիրը հաստատվում է Աերողրոմ շահագործողի կողմից:
- 2) Ելնելով միջոցառումների ծրագրով նախատեսված աշխատանքների ծավալներից, դրանք կարող են իրականացվել Ծառայության կամ կապալառու կազմակերպության(ների) կողմից:

10. Տարեկան տեխնիկական սպասարկման շրջանակներում Աերողրոմ շահագործողի կամ Ծառայության կողմից անցկացվում է անձնակազմի մասնագիտական պատրաստվածության պահպանմանն ուղղված միջոցառումներ՝ տեսական դասընթացներ, որոնց ընթացքում վերանայվում են՝

- 1) Թռիչքների անվտանգության ապահովմանն ուղղված ընթացակարգերը:
- 2) Աերողրոմի տարրերի տեխնիկական սպասարկման գործընթացները և տեխնոլոգիան՝ մաքրում, լցավորում մածուծիկով, մականշումներ և այլն:
- 3) ՕԵՍ մարմնի <<Աշտարակ>> կարգավարական կետի հետ ուղիղկապի վարումը և դարձվածքաբանությունը:
- 4) Աերողրոմի տարածքում երթևեկության համար նախատեսված ուղիները, այդ թվում երթևեկության համար սահմանափակ գոտիները:

5) Աերողրոմի տարրերի նկատմամբ պահանջներ սահմանող իրավական ակտերը և կանոնակարգերը և դրանցում կատարված փոփոխությունները:

11. Ծառայության անձնակազմի մասնագիտական պատրաստվածության ապահովումը կարող է իրականացվել նաև համապատասխան մասնագիտացված ուսումնական կազմակերպությունների կողմից:

12. Ձևեռային ժամանակաշրջանին անբողոքումի տարրերի նախապատրաստման գործընթացն իրականացվում է տարին մեկ անգամ. աշնանը:

13. Ուղեցույցի 12-րդ կետում նշված գործընթացի շրջանակներում՝

1) Մշակվում է անբողոքումի տարրերից ձևափոխման միջոցառումների ծրագիրը, տեխնոլոգիան և սխեման, որոնց համաձայն որոշվում են՝

ա. Աերողրոմի տարրերի շահագործողական վիճակի պահպանման համար անհրաժեշտ մարդկային ռեսուրսները ու տրանսպորտային միջոցների ու սարքավորումների ցանկը: Ձևափոխման սխեման մշակելիս հաշվի է առնվում անբողոքումի տարրերի մաքրման հերթականությունը, հիմք ընդունելով Շահագործման պայմանների 19-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված առաջնահերթությունը:

բ. Աերողրոմի տարրերի արհեստական ծածկույթի հակասառցակալման նպատակով օգտագործվող քիմիական նյութերի քանակները:

գ. Հեռացված ձյան կուտակման գոտիները:

դ. Սույն ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով սահմանված մարդկային ռեսուրսները ու տրանսպորտային միջոցների և սարքավորումների ցանկը, ինչպես նաև քիմիական նյութերի քանակները ներկայացվում են Աերողրոմ շահագործողին:

2) Ստուգվում է անբողոքումի տարրերի շահագործողական վիճակի պահպանման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցների և սարքավորումների պատրաստականությունը:

3) Անցկացվում է Ծառայության անձնակազմի մասնագիտական պատրաստվածության պահպանմանն ուղղված միջոցառումներ՝ տեսական դասընթացներ հետևյալ թեմաների շուրջ՝

ա. Թռիչքների անվտանգության ապահովմանն ուղղված ընթացակարգերը, այդ թվում սահմանափակ տեսանելիության պայմաններում անձնակազմի գործողությունները:

բ. Ձևահեռացման տեխնոլոգիան և սխեմաները:

գ. ՕԵՄ մարմնի <<Աշտարակ>> կարգավարական կետի հետ ռադիոկապի վարումը և դարձվածքաբանությունը:

դ. Վազքուղու արհեստական ծածկույթի կցորդման գործակցի չափման մեթոդիկան:

ե. Աերոդրոմի տարրերի շահագործողական վիճակի պահպանման նպատակով օգտագործվող տրանսպորտային միջոցների և սարքավորումների տեխնիկական բնութագրերը և սպասարկման առանձնահատկությունները:

զ. Բացառությամբ <<դ>> պարբերությունում նշված թեմայի սույն ենթակետով սահմանված դասընթացներն անցկացվում են նաև աերոդրոմի տարրերի շահագործողական վիճակի պահպանման նպատակով օգտագործվող տրանսպորտային միջոցների վարորդական անձնակազմի հետ:

14. Ձմեռային ժամանակաշրջանում աերոդրոմի տարրերի շահագործողական վիճակի պահպանմանն ուղղված գործընթացի շրջանակներում՝

1) Աերոդրոմ շահագործողը՝

ա. Ծառայության կազմից նշանակում է պատասխանատու աշխատակիցներ:

բ. Աերոդրոմի տարրերի սպասարկման նպատակով օդային երթևեկության սպասարկման մարմնի հետ համատեղ անհրաժեշտության դեպքում ընդունում է որոշում աերոդրոմը փակելու մասին:

գ. Ապահովում է աերոդրոմի տարրերի շահագործողական վիճակի վերաբերյալ տրամադրվող տեղեկատվության սահմանված ձևաչափը. Չիկագոյի Կոնվենցիայի N15 Հավելվածի 2-րդ Լրացման և Շահագործման պայմանների 4-րդ գլխի համաձայն:

2) Ծառայությունը՝

ա. Ձևահեռացման աշխատանքներն իրականացնում է սահմանված տեխնոլոգիայի և սխեմաների համաձայն:

բ. Ապահովվում է համագործակցությունն օդային երթևեկության սպասարկման մարմնի <<Աշտարակ>> կարգավարական կետի հետ: Յուրաքանչյուր 15 րոպեն մեկ իրականացվում են ռադիոկապի հսկիչ ստուգումներ:

գ. Սահմանում է վերահսկողություն արհեստական ծածկույթով աերոդրոմի տարրերի և գրունտային գոտիների համակցման գոտիներում ձևակույտների բացառման և տեսողական միջոցների տեսանելիության ապահովման նկատմամբ:

15. Օպերատիվ տեխնիկական սպասարկումն իրականացվում է օդանավերի անձնակազմերի և/կամ/ օդային երթևեկության սպասարկման մարմնի կողմից արձանագրված թերությունների առկայության դեպքում, ինչպես նաև աերոդրոմի տարածքում իրականացվող աշխատանքների (շինարարական, գյուղատնտեսական) ընթացքում:

1) Սույն կետում նշված թերությունների առկայության դեպքում Ծառայության կողմից իրականացվում են լրացուցիչ ուսումնասիրություններ և ձեռնարկվում են միջոցառումներ՝ ուղղված դրանց վերացմանը:

2) Աերոդրոմի տարածքում իրականացվող աշխատանքների ընթացքում Ծառայությունն աջակցում և վերահսկում է դրանց կատարման ընթացքը՝ թռիչքների անվտանգությունն ապահովելու նպատակով:

ՏԵՍՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԷՆԵՐԳԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ  
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄՊԱՍԱՐԿՈՒՄԸ

16. Տեսողական միջոցների և էներգամատակարարման համակարգերի տեխնիկական սպասարկումը նախատեսում է աներոնավիզացիոն լույսերի, տեղեկատվական նշանների, քանու ուղղության ցուցիչի(ների) և էներգամատակարարման համակարգերի շահագործողական վիճակի ուսումնասիրություններ և դրանց արդյունքում արձանագրված թերությունների վերացում, ինչպես նաև պրոֆելակտիկ սպասարկում:

1) Սույն ուղեցույցի իմաստով աներոնավիզացիոն լույսեր են համարվում աներոդրոմի լուսաազդանշանային համակարգը (այսուհետ՝ ԼԱՀ), վայրէջքագծային լույսերը, կառամատույցի լուսավորման լուսարձակները, խոչընդոտների արգելափակիչ լույսերը և Շահագործման պայմանների 10-րդ գլխով սահմանված տեսողական լրացուցիչ միջոցները:

2) Աերոդրոմի տեսողական միջոցների և էներգամատակարարման համակարգերի տեխնիկական սպասարկման գործընթացն ապահովելու նպատակով Աերոդրոմ շահագործողի կողմից պետք է նշանակվի թռիչքների էլեկտրալուսատեխնիկական ապահովման ծառայություն (այսուհետ՝ ԹԷԼՏՍ ծառայություն):

4) Աերոդրոմի տեսողական միջոցների տեխնիկական սպասարկման գործընթացն իրականացվում է հետևյալ ժամանակացույցի համաձայն ամենօրյա, տարեկան և սեզոնային:

5) Ուղեցույցի իմաստով աներոդրոմի տեսողական միջոցների սեզոնային տեխնիկական սպասարկում է համարվում ձմեռային ժամանակաշրջանին աներոդրոմի տեսողական միջոցների նախապատրաստման և ձմեռային ժամանակաշրջանում դրանց շահագործողական վիճակի պահպանմանն ուղղված գործընթացը:

6) Աերոդրոմի էներգամատակարարման համակարգերի տեխնիկական սպասարկման գործընթացն իրականացվում է տարեկան կտրվածքով՝ սարքավորումների շահագործողատեխնիկական փաստաթղթերի և անվտանգության կանոններով սահմանված պահանջների համաձայն:

ա. Սույն ենթակետում նշված գործընթացի ապահովման շրջանակներում ԹԷԼՏՍ ծառայության կողմից մշակվում է էներգամատակարարման համակարգերի տեխնիկական սպասարկման միջոցառումների ծրագիր, որը հաստատվում է Աերոդրոմ շահագործողի կողմից:

բ. Ելնելով միջոցառումների ծրագրով նախատեսված աշխատանքների որակական չափանիշերից և ծավալներից, դրանք կարող են իրականացվել ԹԷԼՏՍ ծառայության, Աերոդրոմ շահագործողի համապատասխան ծառայության կամ կապալառու կազմակերպության(ների) կողմից:

7) Ելնելով առաջացած պայմաններից կարող է իրականացվել աներոդրոմի տեսողական միջոցների և էներգամատակարարման համակարգերի օպերատիվ տեխնիկական սպասարկում:

17. Աերոդրոմի տեսողական միջոցների ամենօրյա տեխնիկական սպասարկման գործընթացի շրջանակներում՝

1) Զննվում են՝

ա. Աերոնավիգացիոն լույսերի և տեղեկատվական նշանների աշխատունակությունը և պիտանիությունը: ԼԱՀ-ի պիտանիության չափանիշերը սահմանված են Շահագործման պայմանների 46-րդ կետով:

բ. ԼԱՀ-ի լուսարձակների ապակիների և լուսազտիչների, ինչպես նաև տեղեկատվական նշանների ամբողջականությունը:

գ. ԼԱՀ-ի հեռակառավարման և ինքնավերահսկման համակարգերի աշխատունակությունը: ՕԵՍ մարմնի համապատասխան կետերում ԼԱՀ-ի աշխատունակության և խափանումների վերաբերյալ տեղեկատվության արտապատկերման ապահովումը:

դ. ԼԱՀ-ի լուսարձակման ինտենսիվության կարգավորման համակարգի աշխատունակությունը:

ե. ԼԱՀ-ի լուսարձակների տեսանելիությունը՝ լուսարձակներին կից բուսական շերտի բարձրությունը, որը պետք է բացառի լուսարձակների ստվերակցումը:

զ. Աերոնավիգացիոն լույսերի և տեղեկատվական նշանների անխափան էներգասնուցման համակարգերի աշխատունակությունը, փոխարկումների առավելագույն տևողությունները:

2) Կատարված զննումների հիման վրա ԹԷԼՏՍ ծառայությունը՝

ա. բնութագրում և ՕԵՍ մարմնին ու օդանավակայանի Շահագործման ծառայությանն է ներկայացնում տեղեկատվություն աերոնավիգացիոն լույսերի և տեղեկատվական նշանների պատրաստականության վերաբերյալ:

բ. Կազմում է աերոնավիգացիոն լույսերի և տեղեկատվական նշանների տեխնիկական սպասարկման օրվա ընթացիք աշխատանքների ծրագիրը, որի մասին տեղեկացվում է օդային երթևեկության սպասարկման մարմինը և օդանավակայանի Շահագործման ծառայությունը:

գ. Իրականացնում է օրվա ընթացիք աշխատանքների ծրագրի կատարումը:

18. Ուժեղ քամիների պայմաններում ԹԷԼՏՍ ծառայությունն իրականացնում է աերոնավիգացիոն լույսերի և տեղեկատվական նշանների լրացուցիչ ուսումնասիրություններ՝ ուղղված լուսարձակների ամբողջականության և ուղղվածության ստուգումներին:

19. Աերողրոմի տեսողական միջոցների տարեկան տեխնիկական սպասարումն իրականացվում է տարվա ընթացքում, որի շրջանակներում ուսումնասիրվում և ստուգվում են՝

1) Աերոնավիգացիոն լույսերի և տեղեկատվական նշանների աշխատունակությունը, ԼԱՀ-ի և խոչընդոտների արգելափակիչ լույսերի լուսարձակման ինտենսիվությունը, որը պետք է համապատասխանի Հավելվածով սահմանված պահանջներին:

2) Աերոնավիգացիոն լույսերի և տեղեկատվական նշանների ամրանների վիճակը՝ ամրությունը, ժանգվածությունը, ներկաշերտը,

3) ԼԱՀ-ի և վայրէջքագծային լույսերը լուսարձակների անդրադարձիչների և ապակիների մաքրությունը:

4) ԼԱՀ-ի, վայրէջքագծային լույսերի և կառամատույցի լուսավորման լուսարձակների տեղակայման անկյունները:

ա. ԼԱՀ-ի լուսարձակների տեղակայման անկյունները սահմանված են Կարգի 68-րդ կետով:

բ. Կառամատույցի լուսավորման լուսարձակների տեղակայման անկյունները պետք է համապատասխանեն Կարգի 98-րդ 2-րդ ենթակետով սահմանված պահանջներին:

գ. Վայրէջքագծային լույսերի լուսարձակների տեղակայման անկյունները պետք է համապատասխանեն տվյալ աերոդրոմի և ուղղության համար հրապարակված վայրէջքագծի թեքության անկյանը:

5) ԼԱՀ-ի ինտենսիվության կարգավորիչների ելքային ցուցանիշերը և լուսարձակների ինտենսիվության կարգավորման միջակայքը, որը պետք է համապատասխանի Կարգի 67-րդ կետով սահմանված կարգավորման աստիճաններին:

6) ԼԱՀ-ի յուրաքանչյուր լուսարձակի էլեկտրական միացումները՝ հաղորդալարերի վիճակը, հարակցիչների մաքրությունը և ամրությունը:

7) Վայրէջքագծային լույսերի համակարգի խոչընդոտներից պաշտպանված հարթությունը, որը պետք է համապատասխանի Կարգի 91-րդ կետով սահմանված պահանջներին:

8) ԼԱՀ-ի խորացված լուսարձակների մեջ ջրի առկայությունը:

9) Քամու ուղղության ցուցիչի(ների) արտահայտվածությունը (գունաթափվածությունը), շարժական հանգույցները, լուսավորվածությունը և ցուցիչի(ների) տեղակայման վայրի մականշումը:

10) ԼԱՀ-ի մասնաշենքի շահագործողական վիճակը և անձնակազմի աշխատանքային պայմանները, ինչպես նաև պաշտպանիչ միջոցների և սարքերի առակյությունը և պիտանիությունը:

11) Սույն կետով սահմանված ուսումնասիրություններն իրականացվում են գարնանը:

20. Տեսողական միջոցների տեխնիկական սպասարկման գործընթացի շրջանակներում տարին առնվազն մեկ անգամ Աերոդրոմ շահագործողն ապահովում է ԼԱՀ-ի և վայրէջքագծային լույսերի համակարգի թռիչքային ստուգումները (թռիչքափորձարկումները):

21. Ուղեցույցի 17-րդ և 19-րդ կետերով սահմանված ուսումնասիրությունների ընթացքում արձանագրված արդյունքների հիման վրա մշակվում է թերությունների վերացման և տեխնիկական սպասարկման միջոցառումների ծրագիր, որում նշվում են՝ միջոցառումները, դրանց վերացման ժամկետները, կատարող և պատասխանատու կազմակերպությունները կամ ծառայությունները:

1) Միջոցառումների ծրագիրը հաստատվում է Աերոդրոմ շահագործողի կողմից:

ա. Միջոցառումների ծրագրում կարող են ներառվել աշխատանքներ, որոնք սահմանված աերոդրոմի տեսողական միջոցների շահագործողական փաստաթղթերով:

2) Ելնելով միջոցառումների ծրագրով նախատեսված աշխատանքների որակական չափանիշերից և ծավալներից, դրանք կարող են իրականացվել ԹԷԼՏԱ ծառայության, Աերոդրոմ շահագործողի համապատասխան ծառայության կամ կապալառու կազմակերպության(ների) կողմից:

22. Ձմեռային ժամանակաշրջանին աերոդրոմի տարրերի նախապատրաստման գործընթացն իրականացվում է տարին մեկ անգամ. աշնանը, որի շրջանակներում՝

1) Անցկացվում է աերոդրոմի աերոնավիգացիոն լույսերի և տեղեկատվական նշանների ամբողջականության, աշխատունակության և լուսարձակման ինտենսիվության համապատասխանության լրացուցիչ ուսումնասիրություններ և չափումներ:

ա. Կատարված ուսումնասիրությունների և չափումների արդյունքների հիման վրա մշակվում է տեխնիկական սպասարկման միջոցառումների ծրագիր և ապահովում է դրա կատարումը:



2) Ստուգվում են ԼԱՀ-ի խորացված լուսարձակների ապակիների մաքրությունը, վերին հանգույցի տակդիրի ամբողջականությունը և ամրությունը. անհրաժեշտության դեպքում կատարվում է դրանց տեխնիկական սպասարկում՝ մաքրում, փոխարինում, ձգում:

3) ԼԱՀ-ի և վայրէջքագծային համակարգի լուսարձակների ապակիների մաքրությունը:

4) Աերողրոմ շահագործողն ապահովում է պահուստային լուսարձակների առկայությունը:

23. Ձմեռային ժամանակաշրջանում ԹԷԼՏԱ ծառայության կողմից՝

1) Աերողրոմի ձնահեռացման աշխատանքների ընթացքում իրականացվում է ԼԱՀ-ի և վայրէջքագծային համակարգի լուսարձակների, ինչպես նաև տեղեկատվական նշանների ամբողջականության լրացուցիչ ուսումնասիրություններ:

2) Վերահսկվում է ԼԱՀ-ի և վայրէջքագծային համակարգի լուսարձակների, ինչպես նաև տեղեկատվական նշանների տեսանելիությունը. դրանց մոտ ձնակույտերի առկայությունը:

3) Իրականացվում են խոչընդոտների արգելափակիչ լույսերի աշխատունակության լրացուցիչ վերահսկողություն:

24. Տեսողական միջոցների օպերատիվ տեխնիկական սպասարկումն իրականացվում է օդանավերի անձնակազմերի և/կամ/ օդային երթևեկության սպասարկման մարմնի կողմից արձանագրված թերությունների առկայության դեպքում, ինչպես նաև աերողրոմի տարածքում իրականացվող աշխատանքների (շինարարական, գյուղատնտեսական) ընթացքում:

1) Սույն կետում նշված թերությունների առկայության դեպքում ԹԷԼՏԱ ծառայության կողմից իրականացվում են լրացուցիչ ուսումնասիրություններ և ձեռնարկվում են միջոցառումներ՝ ուղղված դրանց վերացմանը:

25. Տարեկան տեխնիկական սպասարկման շրջանակներում Աերողրոմ շահագործողի կամ ԹԷԼՏԱ ծառայության կողմից անցկացվում է անձնակազմի մասնագիտական պատրաստվածության պահպանմանն ուղղված միջոցառումներ՝ տեսական դասընթացներ, որոնց ընթացքում վերանայվում են՝

1) Թռիչքների անվտանգության ապահովմանն ուղղված ընթացակարգերը, այդ թվում սահմանափակ տեսանելիության պայմաններում անձնակազմի գործողությունները:

2) ԼԱՀ-ի և էներգամատակարարման համակարգերի սպասարկման կանոնները և գործընթացները:

3) Համագործակցությունը ՕԵՍ մարմնի հետ: <<Աշտարակ>> կարգավարական կետի հետ ռադիոկապի վարումը և դարձվածքաբանությունը:

4) Աերողրոմի տարածքում երթևեկության համար նախատեսված ուղիները, այդ թվում երթևեկության համար սահմանափակ գոտիները:

5) Էլեկտրասարքավորումների հետ աշխատանքի անվտանգության կանոնները:

6) Սույն կետում նշված միջոցառումների շրջանակներում անցկացվում են ստուգարքներ և տրվում են թույլտվություններ համապատասխան անձակազմին բարձր և ցածր լարման սարքավորումների հետ աշխատելու համար:

26. Հատուկ տրանսպորտային միջոցների (այսուհետ՝ ՀՏՄ) տեխնիկական սպասարկումը նախատեսում է շահագործողական վիճակի ուսումնասիրություններ և դրանց արդյունքում արձանագրված թերությունների վերացում և պիտանիության պահպանմանն ուղղված գործողություններ:

1) ՀՏՄ տեխնիկական սպասարկման գործընթացն ապահովելու նպատակով Աերոդրոմ շահագործողի կողմից պետք նշանակվի է համապատասխան ծառայություն (այսուհետ՝ ՀՏՄ ծառայություն):

2) ՀՏՄ տեխնիկական սպասարկման գործընթացն իրականացվում է հետևյալ ժամանակացույցի համաձայն ամենօրյա և սեզոնային:

27. Ամենօրյա տեխնիկական սպասարկումն ուղղված է Գլխավոր վարչության պետի 2003 թվականի դեկտեմբերի 18-ի N 246-Ն հրամանով հաստատված <<Քաղաքացիական ավիացիայի բնագավառում շահագործվող վերգետնյա միջոցների ու մատուցվող ծառայությունների ապահովության ու անվտանգության կանոնակարգի>> (այսուհետ՝ Կանոնակարգ) 58-րդ կետով սահմանված պահանջի ապահովմանը:

28. Ամենօրյա տեխնիկական սպասարկման շրջանակներում իրականացվում է ՀՏՄ-ի տեխնիկական զննում, մինչ աներոդրոմի տարածք դուրս գալը: Տեխնիկական զննման ընթացքում ստուգվում են՝

1) ՀՏՄ-ի համալրվածությունը Կանոնակարգի 38-րդ կետով սահմանված միջոցներով՝ դեղին առկայծիչ լույսերով, հրդեհի մարման և քարշակման միջոցներով, ներօդանավակայանային ռադիոկապով:

2) ՀՏՄ-ի արտաքին տեսքը և լուսաադանշանային միջոցների, այդ թվում՝ դեղին առկայծիչ լույսերի և ներօդանավակայանային ռադիոկապանի աշխատունակությունը:

3) ՀՏՄ-ի հիմնամասի և հատուկ հանգույցների շահագործողական վիճակը:

4) Արգելակման համակարգի աշխատունակությունը:

5) Վառելիքի կամ քսայողերի կաթոցների առկայությունը:

29. Տեխնիկական զննման արդյունքում կատարվում է գրառում ՀՏՄ-ի ուղեգրային թերթիկում կամ համապատասխան գրանցամատյանում. համաձայն Կանոնակարգի 59-րդ կետի:

1) Տեխնիկական զննման արդյունքում թերությունների արձանագրման դեպքում կազմվում է դրանց վերացման միջոցառումների ծրագիր:

**2) Տեխնիկապես անսարք և չհամալրված ՀՏՄ-ի մուտքն աներոդրոմի տարածք խստիվ արգելվում է:**

30. Ուղեցույցի իմաստով ՀՏՄ-ի սեզոնային տեխնիկական սպասարկում է համարվում ձմեռային ժամանակաշրջանին ՀՏՄ-ի նախապատրաստման և տվյալ ժամանակաշրջանի ընթացքում դրանց շահագործողական վիճակի պահպանմանն ուղղված գործընթացը:

31. Ձմեռային ժամանակաշրջանին ՀՏՄ-ի նախապատրաստման գործընթացն իրականացվում է տարին մեկ անգամ. աշնանը, որի շրջանակներում՝

1) Ուսումնասիրում է ուղեցույցի 13-րդ կետի 2-րդ ենթակետի <<ա>> պարբերության համաձայն Աերոդրոմային ծառայության կողմից ներկայացված տրանսպորտային միջոցների և սարքավորումների ցանկում ներառված ՀՏՄ-ի շահագործողական վիճակը, այդ թվում՝ հիմնամասի և հատուկ հանգույցների:

2) ՀՏՄ-ի հիմնամասի ուսումնասիրությունների շրջանակներում ուսումնասիրվում են՝  
ա. Անվադողերի մաշվածությունը:

բ. Կուտակիչների պիտանիության ժամկետները:

գ. ՀՏՄ-ի համալրվածությունը. համաձայն Ուղեցույցի 28-րդ կետի 1-ի ենթակետի:

դ. ՀՏՄ-ի արտաքին տեսքը և լուսաադանշանային միջոցների, այդ թվում դեղին առկայծիչ լույսերի և ներօդանավակայանային ռադիոկայանի աշխատունակությունը:

3) ՀՏՄ-ի հատուկ հանգույցների ուսումնասիրությունների շրջանակներում ուսումնասիրվում են՝

ա. Հատուկ հանգույցների աշխատունակությունը:

բ. Ձյունամաքիչ ՀՏՄ-ի մաքրող խոզանակների և ձյունագութանի ռետինե դանակների շահագործողական վիճակը:

32. Ուղեցույցի 28-րդ կետով սահմանված ուսումնասիրությունների արդյունքում կազմվում է տեխնիկական սպասարկման միջոցառումների ծրագիրը և անհրաժեշտ պահեստամասերի ցանկը, որոնք ներկայացվում են Աերոդրոմ շահագործողի հաստատմանը:

1) Պահեստամասերի ցանկը կազմվում է հաշվի առնելով ձմեռային ժամանակաշրջանում արագամաշ միջոցների (մաքրող խոզանակներ, գութանի ռետինե դանակներ) և քսայուղերի անհրաժեշտ պահուստային քանակները:

33. Համաձայն Ուղեցույցի 32-րդ կետում նշված միջոցառումների ծրագրի իրականացվում է ՀՏՄ-ի տեխնիկական սպասարկում՝ ուղղված դրանց պատրաստականության ապահովմանը:

1) Սույն կետում նշված աշխատանքների շրջանակներում ապահովվում է ՀՏՄ-ի լցավորումը ձմեռային ժամանակաշրջանին համապատասխան քսայուղերով և հեղուկներով:

34. Ձմեռային ժամանակաշրջանում ՀՏՄ-ի շահագործման ընթացքում, ի լրումն Ուղեցույցի 33-րդ կետով սահմանված տեխնիկական սպասարկումներից բացի կարող է իրականացվել լրացուցիչ տեխնիկական սպասարկում, պայմանավորված ընթացիկ շահագործման հետ:

35. Տարին առնվազն երկու անգամ ՀՏՄ ծառայության կամ Աերոդրոմ շահագործողի համապատասխան ծառայության կողմից անցկացվում է ՀՏՄ-ի վարորդների տեսական վերապատրաստում. համաձայն Կանոնակարգի 52-րդ կետի:

1) Ձմեռային ժամանակաշրջանին նախապատրաստման գործընթացի շրջանակներում ՀՏՄ-ի վարորդների վերապատրաստումն իրականացվում է Ուղեցույցի 13-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն: